

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԵՎ ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄԻՋԵՎ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ**  
**ՀԱՐԿԵՐ ԶՎՃԱՐԵԼՆ ՈՒ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Մալթայի Հանրապետության Կառավարությունը,  
ցանկանալով ավելի զարգացնել իրենց միջև տնտեսական հարաբերությունները  
և ամրապնդել հարկային հարցերում համագործակցությունը,  
մտադրություն ունենալով կնքելու եկամուտների կրկնակի հարկումը բացառելու  
մասին Համաձայնագիր՝ առանց հնարավորություն ստեղծելու հարկեր չվճարելու  
կամ հարկումից խուսափելու միջոցով չհարկվելու կամ նվազ հարկվելու համար  
(ներառյալ առևտրային պայմանավորվածությունների համաձայնագրերի միջոցով,  
որոնք ուղղված են երրորդ պետությունների ռեզիդենտների անուղղակի օգուտի  
համար սույն Համաձայնագրով նախատեսված առավելություններ ստանալուն),  
պայմանավորվեցին հետևյալի մասին.

**Հոդված 1**

**ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի  
կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

**Հոդված 2**

**ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ**

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության անունից  
եկամտից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ այն եղանակից, որով դրանք  
գանձվում են:

2. Եկամտից հարկեր են համարվում ընդհանուր եկամտից կամ եկամտի  
տարրերից, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող  
եկամուտներից բոլոր հարկերը և ձեռնարկությունների կողմից վճարված  
աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից գանձվող հարկերը:

3. Գործող հարկերը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը,  
մասնավորապես հետևյալն են.

(a) Հայաստանում՝

(i) շահութահարկ,

- (ii) Եկամտային հարկ,  
(այսուհետ՝ հայկական հարկ),
- (b) Մալթայում  
Եկամտահարկ,  
(այսուհետ՝ մալթական հարկ):

4. Սույն Համաձայնագիրը կկիրառվի նաև ցանկացած նույնական կամ էապես նման հարկատեսակների նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկատեսակների կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կձանուցեն իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

### Հոդված 3

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

(a) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» եզրույթները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Մալթա,

(b) «Հայաստան» եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքները, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավազորություն՝ համաձայն ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի,

(c) «Մալթա» եզրույթը նշանակում է Մալթայի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ Մալթա կղզի, Գոզո կղզի և Մալթական կղզիախմբի մյուս կղզիներ՝ ներառյալ դրանց տարածքային ջրերը, ինչպես նաև ծովի հատակի ցանկացած տարածք, դրա ընդերքը և տարածքային ջրերի արտաքին սահմանին հարակից ջրային տարածքները, որոնց նկատմամբ Մալթան իրականացնում է ինքնիշխան իրավունքներ, իրավազորություն կամ վերահսկողություն՝ միջազգային իրավունքի և իր ներպետական օրենսդրության համաձայն, ներառյալ մայրցամաքային ելուստների ուսումնասիրության և իր բնական ռեսուրսների արդյունահանման հետ կապված օրենսդրությունը,

(d) «անձ» եզրույթը ներառում է ֆիզիկական անձանց, կոլեկտիվ ներդրումային համակարգը, ընկերությունը և անձանց ցանկացած այլ միավորումը,

(e) «ընկերություն» եզրույթը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

(f) «ձեռնարկություն» եզրույթը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

(g) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եզրույթները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

(h) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

(i) «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը,

(j) «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է.

(i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարար և պետական եկամուտների կոմիտեի նախագահ կամ նրանց լիազորված ներկայացուցիչներ,

(ii) Մալթայի դեպքում՝ ֆինանսների համար պատասխանատու նախարար կամ նրա լիազորված ներկայացուցիչ,

(k) «քաղաքացի» եզրույթը՝ կապված Պայմանավորվող պետության հետ, նշանակում է.

(i) այդ Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

(ii) այդ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա իր, որպես այդպիսին, կարգավիճակն ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա:

2. Պայմանավորվող պետության կողմից ցանկացած պահի սույն Համաձայնագրի կիրառման նպատակով՝ նրանում չսահմանված ցանկացած եզրույթ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն այդ պահին այն ունի, այդ Պետության օրենսդրության համաձայն, այն հարկերի նպատակներով, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը. ընդ որում՝ այդ Պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված ցանկացած

նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ եզրույթին տրվող նշանակության նկատմամբ:

#### **Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ**

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» եզրույթը նշանակում է՝ ցանկացած անձ, ով, այդ պետության օրենքների համաձայն, ենթակա է այնտեղ հարկման իր մշտական բնակության, ռեզիդենտության, ստեղծման (գրանցման) վայրի, կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման բնույթի չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը: Սակայն այդ եզրույթը չի ներառում որևէ անձի, ով այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

(a) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

(b) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ գտնվող մշտական կացարան չունի, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

(c) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է, կամ չի բնակվում դրանցից և ոչ մեկում, նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է,

(d) եթե նա երկու Պետությունների քաղաքացի է կամ դրանցից և ոչ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը: Այն դեպքում, երբ իրավասու մարմինների միջև կա վեճ նման անձի փաստացի կառավարման վայրի գտնվելու հետ կապված, և իրավասու

մարմինները չեն կարողանում գալ համաձայնության, տվյալ անձը համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ գրանցված է:

## Հոդված 5

### ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «մշտական հաստատություն» եզրույթը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» եզրույթը մասնավորապես ներառում է.

(a) կառավարման վայրը,

(b) մասնաճյուղը,

(c) գրասենյակը,

(d) գործարանը,

(e) արհեստանոցը և

(f) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների հետազոտման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. (a) Շինարարական հրապարակը կամ կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի շինարարությունը, ծրագիրը կամ գործունեությունը շարունակվում են ավելի քան 9 ամիս ժամանակահատվածով:

(b) Ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները, այդ նպատակով ձեռնարկության կողմից ընդգրկված աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով, կազմում է մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը երկրում շարունակվում է (միևնույն կամ այդ ծրագրի հետ կապված ծրագրի համար) ցանկացած տասներկուամսյա ժամկետում ընդհանուր առմամբ ավելի քան 6 ամիս ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ համարվում է, որ «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում.

(a) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

(b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

(c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

(d) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկատվության հավաքման նպատակով,

(e) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

(f) գործունեության կայուն վայրի պահումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ գործունեության կայուն վայրի համընդհանուր գործունեությունը այս համակցության արդյունքում ունի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ չհանդիսացող անձը, որին վերաբերում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում ցանկացած գործունեության մասով, որն այդ անձն իրականացնում է տվյալ ձեռնարկության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը եթե իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության՝ այդ կետի դրույթների համաձայն:

6. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, ընդհանուր հանձնաժողովի գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ ընկերությունը, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), այդ ընկերություններից որևէ մեկին ինքնին չի դարձնում մյուսի մշտական հաստատություն:

## Հոդված 6

### ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» եզրույթն ունի այն նշանակությունը, որն ունի այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Եզրույթն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց որպես փոխհատուցում փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները. նավերը և օդանավերը չեն դիտարկվում որպես անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացվող եկամուտների նկատմամբ:

## Հոդված 7

### ՇԱՀՈՒՅՔ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. 3-րդ կետի դրույթների համաձայն՝ եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական

հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող՝ տարբեր և առանձին ձեռնարկություն և գործեր ամբողջովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս որպես նվազեցումներ կթույլատրվեն այն ծախսերը, որոնք արվել են մշտական հաստատության նպատակներով, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, որոնք արվել են՝ անկախ նրանից՝ այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ տեղում: Այսինքն՝ Պայմանավորվող պետության կողմից թույլատրելի նվազեցվող ծախսերը ներառում են միայն այն ծախսերը, որոնք նվազեցվում են այդ Պետության ներպետական օրենսդրության համաձայն:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր մասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համաչափ բաշխման հիման վրա, ոչինչ 2-րդ կետում այդ Պայմանավորվող պետությանը չի խոչընդոտում որոշել հարկման ենթակա շահույթը այնպիսի համաչափ բաշխմամբ, որն ընդունելի կլինի. այնուամենայնիվ, համաչափ բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ներառված սկզբունքներին:

5. Մշտական հաստատությանը չի վերագրվի որևէ շահույթ միայն այն պատճառով, որ մշտական հաստատության կողմից ապրանքներ կամ արտադրանք է գնվել ձեռնարկության համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին քննարկվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

## **Հոդված 8**

### **ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:



2. Սույն հոդվածի նպատակներով միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթները ներառում են նավերի կամ օդանավերի վարձակալությունից ստացված շահույթները, եթե այդպիսի նավերը և օդանավերը շահագործվում են միջազգային փոխադրումներում, կամ եթե այդպիսի վարձակալությունից ստացված շահույթները սույն հոդվածի 1-ին կետի նշված շահույթների արդյունք են:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ գործունեությունում կամ միջազգային շահագործման գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

### Հոդված 9

#### ՓՈՒՏԱՊԱԿՑՎԱԾ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ՝

(a) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

(b) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական հարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին ստեղծվել անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը նշված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին ստեղծված կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդպիսի շահույթից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, այն դեպքում, երբ այդ մյուս Պետությունը համարում է ճշգրտումը արդարացված: Այդպիսի ճշգրտումը որոշելիս

հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

### **Հոդված 10 ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժինները վճարող ընկերությունը, և այդ Պետության օրենքներին համապատասխան, սակայն՝

(a) եթե շահաբաժինները վճարվում են Հայաստանի ռեզիդենտ ընկերության կողմից Մալթայի ռեզիդենտին, ով դրանց փաստացի սեփականատերն է, Հայաստանում այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի՝

(i) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերն ընկերություն է (բացի ընկերակցությունից), որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը և շահաբաժինների վճարման օրվա դրությամբ շահաբաժիններ վճարող ընկերության բաժնետիրական կապիտալում ներդրել է առնվազն մեկ ու կես միլիոն եվրո (կամ դրան համարժեք ցանկացած այլ արտարժույթ),

(ii) շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

(b) այն դեպքում, երբ շահաբաժինները վճարվում են Մալթայի ռեզիդենտ ընկերության կողմից Հայաստանի ռեզիդենտին, ով դրանց փաստացի սեփականատերն է, Մալթայում շահույթից գանձված հարկի համախառն գումարը չպետք է գերազանցի այն գանձվող գումարին, որից վճարվել են շահաբաժինները:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ: Սույն կետը չի ազդում ընկերության հարկման վրա այն շահույթի մասով, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսի կարգավորման ենթակա է բաժնետոմսերից եկամուտը՝

այն Պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտ է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող որևէ հարկ սահմանել ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, ոչ էլ կարող է ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## **Հոդված 11 ՏՈԿՈՍՆԵՐ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, և այդ Պետության օրենքներին համապատասխան. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Տոկոսներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոտեկային ապահովումից և

պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն, այնուամենայնիվ, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերության պատճառով տոկոսների գումարը պարտապահանջի վերաբերյալ, որի համար այն վճարվում է, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերության բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

## **Հոդված 12**

### **ՌՈՅԱԼԹԻՆԵՐ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ոռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ նրանք առաջանում են, այդ Պետության օրենքներին համապատասխան. բայց եթե ստացողը ոռոյալթիների փաստացի սեփականատերն է, այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ոռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթիներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ ռադիո- կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների ցանկացած հեղինակային իրավունքի, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման կամ օգտագործման իրավունքի դիմաց կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության դիմաց:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ոռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ոռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ոռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը՝ Պետությունն է կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն երբ ոռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ոռոյալթիներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ոռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ոռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերության պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ոռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և

փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերության բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

### **Հոդված 13**

#### **ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող և 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի կամ այլ այնպիսի ձեռնարկություններում, ինչպիսիք են ընկերակցությունները կամ թրասքները, ունեցած փայերի օտարումից ստացված գույքի արժեքի հավելաճը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, եթե այդ բաժնետոմսերի կամ փայերի օտարմանը նախորդող 365 օրվա ընթացքում ցանկացած պահի դրությամբ դրանց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձևավորվել է անշարժ գույքից, որը, 6-րդ հոդվածի համաձայն, գտնվում է այդ մյուս Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է օտարող անձը:

## Հոդված 14

### ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի կատարվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը կատարվում է այդ կերպ, դրանից ստացված նման վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պետությունում, եթե.

(a) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և

(b) վարձը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

(c) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը, որը վճարվել է Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից, կարող է հարկվել այդ Պետությունում:

## Հոդված 15

### ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

## Հողված 16

### ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչ կամ մարզիկ, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե արվեստի գործիչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, այդ եկամուտը, անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչ կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել միայն այդ Պետությունում, եթե այդ գործունեությունն իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում՝ մշակութային կամ սպորտային փոխանակման ծրագրերի շրջանակներում, որոնք հաստատված են երկու Պայմանավորվող պետությունների կողմից:

## Հողված 17

### ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկինում կատարած վարձու աշխատանքի համար վճարած կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

## ՀՈԴՎԱԾ 18

### ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. (a) Պայմանավորվող պետության կողմից այդ Պետությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

(b) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող



պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և ֆիզիկական անձը այդ պետության ռեզիդենտ է, ով.

(i) այդ Պետության քաղաքացի է կամ

(ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. (a) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության կողմից կամ նրա ստեղծած հիմնադրամներից այդ Պետությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

(b) Սակայն այդպիսի կենսաթոշակները և համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վճարվող աշխատավարձերի, ռոճիկների, կենսաթոշակների և համանման այլ վարձատրությունների նկատմամբ:

## **Հոդված 19**

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**

Ուսանողը կամ ստաժյորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը նշված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չէ հարկման այդ Պետությունում իր ապրելու, կրթության կամ մասնագիտանալու համար ստացած վճարումներից՝ պայմանով, որ այդ վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

## **Հոդված 20**

### **ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ**

1. Ֆիզիկական անձը, ով ժամանել է Պայմանավորվող պետություն այդ Պետությունում գտնվող համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցանելու կամ հետազոտություն անցկացնելու նպատակով, և ով հանդիսանում կամ անմիջապես մինչև ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, կազատվի հարկումից առաջինը նշված Պայմանավորվող պետությունում այդպիսի

ուսուցանման կամ հետազոտման համար վարձատրության առնչությամբ՝ այդ նպատակով իր առաջին ժամանման օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածում, պայմանով, որ այդ վարձատրությունն առաջանում է այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն վերաբերում հետազոտությունից ստացվող վարձատրությանը, եթե այդպիսի հետազոտությունն իրականացվում է ոչ թե հանրային շահի, այլ հիմնականում հատուկ անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

### **Հոդված 21**

#### **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն Համաձայնագրի վերոնշյալ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից եկամուտներից բացի այլ եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող աղբյուրներից ստանում է եկամուտ վիճակախաղերից, խաչբառ-հանելուկներից, մրցավազքերից, ներառյալ՝ ձիարշավներից, խաղաքարտերից և ցանկացած բնույթի այլ խաղերից կամ դրամախաղից կամ ցանկացած տեսակի կամ բնույթի գրազ հաղթելով, նման եկամուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում:

### **Հոդված 22**

#### **ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ**

1. Երբ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, առաջինը նշված Պետությունը թույլ է տալիս այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից նվազեցնել մյուս Պայմանավորվող պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումար: Սակայն այդպիսի

նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցնելը հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը վերագրելի է այն եկամտին, որը կարող է հարկվել մյուս Պետությունում:

2. Երբ, սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան, մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ազատված է այդ Պետությունում հարկումից, այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է նման ռեզիդենտի եկամտի մնացած մասի նկատմամբ հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը:

### **Հոդված 23**

#### **ՈՉ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքներում, մասնավորապես կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության քաղաքացիները: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորությունների կատարումն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ Պետության քաղաքացիները միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պետության՝ համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումից: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող, թե նա մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան պարտավորությունների հիման վրա հարկման նպատակներով պետք է այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրի, ինչպիսիք շնորհում է իր ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 6-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները, տոկոսները, ռոյալթին և Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են հանման նույն պայմաններով, ինչ պայմաններով հանվում են առաջինը նշված Պետության ռեզիդենտին վճարելիս:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է այդ մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարումն են, որոնց առաջինը նշված Պետության այլ նման ձեռնարկությունները ենթարկվում են կամ կարող են ենթարկվել:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ:

#### **Հոդված 24**

#### **ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պետությունների օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել յուրաքանչյուր Պայմանավորվող պետության իրավասու մարմնին: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը կհամարի հիմնավորված, և եթե նա չկարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառելու սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենսդրությունում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն հարթել բոլոր դժվարությունները կամ հակասությունները, որոնք կարող են առաջանալ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Համաձայնագրով չնախատեսված դեպքերում նրանք կարող են նաև խորհրդակցել՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, ներառյալ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով, կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ընթացման մեջ համաձայնության հասնելու նպատակով:

## Հոդված 25

### ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են սույն Համաձայնագրի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների իրականացման կամ կիրառման համար կանխատեսելիորեն համապատասխան տեղեկություններ Պայմանավորվող պետությունների անունից կիրառվող՝ ցանկացած տեսակի և ձևի հարկի վերաբերյալ, այն չափով, որը չի հակասում սույն Համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես Պետության ներպետական օրենքներին համապատասխան ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը կամ վերոնշյալի վերահսկողությանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակներով: Նրանք կարող են տեղեկությունը հրապարակել բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում: Չնայած վերոնշյալին՝ Պայմանավորվող պետության կողմից ստացված տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, երբ երկու պետությունների օրենսդրության համաձայն այդպիսի տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով և տրամադրող Պետության իրավասու մարմինը թույլատրել է այդպիսի օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

(a) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ,

(b) տրամադրել տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

(c) տրամադրել տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկությունների ձեռք բերման իր միջոցները՝ ստանալու համար պահանջված տեղեկությունները նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պետությունն իր հարկային նպատակների համար կարող է չունենալ այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը 3-րդ կետով ենթարկվում է սահմանափակումների, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող պետությանը՝ մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը չունի այդպիսի տեղեկությունների նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող պետությանը՝ մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ վստահված անձը, կամ որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

#### **Հոդված 26**

#### **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ**

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

## Հոդված 27

### ՕԳՈՒՏՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Չնայած սույն Համաձայնագրի այլ դրույթներին՝ սույն Համաձայնագրի հիման վրա որևէ օգուտ չի տրամադրվի եկամտի որևէ տեսակի համար, եթե, նկատի ունենալով այլ համապատասխան փաստերը և հանգամանքները, ողջամիտ է եզրակացնել, որ այդ օգուտի ստացումը եղել է այն պայմանավորվածության կամ գործարքի հիմնական նպատակը, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրել է այդ օգուտին, քանի դեռ չի հաստատվել, որ այդ օգուտի տրամադրումը այդ հանգամանքներում կլիներ սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների առարկային և նպատակին համապատասխան:

## Հոդված 28

### ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իրենց ներպետական օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այդ ծանուցումներից վերջինի ստացման օրվանից, և դրա դրույթները կգործեն.

(a) Հայաստանում՝

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

(ii) եկամտի մյուս հարկերի առնչությամբ՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրվանից սկսվող՝ հարկման ենթակա ցանկացած տարվա համար:

(b) Մալթայում՝

եկամտի հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին անմիջապես հաջորդող հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա կամ հաշվապահական ժամանակահատվածի ընթացքում ստացված եկամուտների նկատմամբ՝ կախված հանգամանքներից:

## Հոդված 29

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կլինի մինչև դադարեցվի Պայմանավորվող պետություններից որևէ մեկի կողմից: Պայմանավորվող պետություններից

յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագիրը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ուղարկելով Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հնգամյա ժամկետը լրանալուց հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը.

(a) Հայաստանում՝

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված եկամուտների նկատմամբ, և

(ii) եկամտի մյուս հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող՝ հարկման ենթակա տարիների համար:

(b) Մալթայում՝

եկամտից գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումը հանձնելու ամսաթվին անմիջապես հաջորդող հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա կամ հաշվապահական ժամանակահատվածի ընթացքում ստացված եկամուտների նկատմամբ՝ կախված հանգամանքներից:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Նյու Յորք քաղաքում 2019 թվականի սեպտեմբերի 24-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն. երկու տարբերակները հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ առաջացած տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

